

և քննած Յունաց եւ այլ սլաւ ազգաց կրօնական մատենները, պրպտած է ժողովրդական մատենագրութիւնն իւր ամէն կերպարանաց ներքեւ, իրրեւ երգ, առակ, պատմութիւն եւն. հետադրած է ժողովրդեան ունեցած կարծիքները՝ գիւղերու դասատուաց եւ այլոց ձեռք, միով բանիւ՝ ի մի հաւաքած է Հայոց անցելոյն նկատմամբ այն ամենայն՝ զոր ժամանակը չէ կրցած ապականել, նոյն խիւ անոնց երաժշտութիւնն ու պարերը, որպէս զի ներկայ եւ յետագայ սերնդոց համար՝ Հայոց ի Ռումանիա ունեցած անցելոյն վրայ հեշտեալ եւ ապահովութեամբ դատաստան մը կտրելու միջոցն ընծայէ:

Արդ այս ուսումնասիրութեանս զբաղած ժամանակ՝ Պր. Հաշտէու կրած պիտի ըլլայ անշուշտ այն դարմանքը՝ զոր ամէն ընթերցողները կը զգան նշմարելով թէ իւր նախնեցիաց ուսումնասիրութեան մէջ ապացուցած՝ Ռումանացւոց Հայոց նկատմամբ ունեցած զգածման բոլորովին հակառակ կ'ելլէ իւր այս նոր կարծիքը:

Ի մէջ բերենք օրինակի աղագաւ քանի մը վկայութիւն այն զանազան ու բազմաթիւ յիշատակարաններուն մէջէն՝ զորս Պր. Հաշտէու այնպիսի տաժանելի աշխատութեամբ միաբանել անացած է:

«Հայն՝ յաջա Ռումանացւոց պիղծ արարած է, ասոր համար ալ Ռումանացին չ'ուզեր երբեք անոր բան մը փոխ տալ, կամ անոր հետ ճաշել, գլխաւորաբար կը խորշի մի եւ նոյն գոյլէն կամ որ եւ է անթիւ ջուր խմել, համոզուած ըլլալով թէ կը պղծուի թէ Հայէն վերջը ջուր խմէ: — Ժողովուրդը կը կարծէ թէ Հայք կը պղծեն դիտմամբ այն անթիւները՝ որոնց մէջ այլազգեաց համար կերակուր կը պատրաստեն: — Հայոց կրօնն այնպէս պիղծ ու զզուելի է որ հազիւ թէ երեւակայել հնարաւոր է. Արցիպուրի, Արցիփուրցի կամ Արցիպուր՝ անուամբ շուն մը կը պաշտեն՝ որուն պատուոյն համար զոհեր կը մատուցանեն ու պիղծ ծով մը կը պահեն:»¹

«Հեթանոսներէն չարագոյն են, որուն համար ալ իրենց աղօթելու ժողովատեղին ոչ եթէ եկեղեցի՝ այլ տաճար միայն կրնայ կոչուիլ, ինչպէս հեթանոսացը. (Կոստին, Ժամանակագրութիւն՝ էջ 42):»

«Ճշմարիտ հաւատացեալներն այսպիսի էակներէ հեռու պահելու համար՝ Կոմորայի

օրէնսդրութիւնը կը պատուիրէ. — Եթէ մէկն Հայոց եւ ուրիշ հերետիկոսաց հետ ճաշէ կամ անոնց հետ որ եւ իցէ յարաբերութիւններ ունենայ՝ յաստուածային օրինաց կը հրամայուի այնպիսոյն թողուլ այս ամենայն:» — Պիղերիգանի Արսէնին Սաղմոսարանի մեկնութեան մէջ՝ (1650 ին գրուած եւ ուումանական ճեմարանին վերաբերող ձեռագիր մը)՝ Լ. Զ. սաղմոսին մէկ տունը՝ «Էդուար բառին տեղը հայ բառն իբր համանուն մոծուելով սրբագրուած է:» — Ժողովրդեան՝ քածերուն տուած անուանց մէջ կը գտնուի նաեւ Հայո-նի ինչպէս եւ արու շանց անուանց մէջ Կարապետ անունը՝* որ Հայոց Ս. Յովհաննու մկրտչի տուած կոչումներէն մին է. (Ուսուցչաց տուած տեղեկութիւններն են ասոնք):

— «Հայ վերագիրը՝ ժողովուրդը կը գործածէ Հար բան մը նշանակելու համար. զ. օր. հայախան վէր, — Հար, ծանր վէրք (Ժողովրդական բանաստեղծութիւնք, Թէոտորէսգու, էջ 359):»

— «Անծեղն իւր գարշահոտութեան համար կոչուած է հայախան Կիւ:»

Այս ամէն բանի վրայ կրնանք աւելցնել նաեւ «Հայը՝ Կիւլուլի Գիւլի» ասութիւնը, նշանակել ուղեւոր թէ Հայք իրենց գլխուն մէջ փոխանակ ուղեղի՝ ուրիշ բան ունին, եւ թէ ապա, անքան անասուն են եւ մտաւոր կրթութեան անատակ բոլորովին:

Թէ ժողովրդեան մտաց մէջ այսպէս անուանարկ ու այնպիսի անականներով կոչուած Հայերը՝ նախկին Ռումանացիներէն ինչպիսի արդարութիւն կրնային յուսալ՝ կը ցուցնէ մեզ առածմը որ կ'երեւայ թէ իրաւաբանական սկզբունք մ'եղած ըլլայ ինչպէս կ'ըսէ Պր. Հաշտէու. «Իբր իրաւաբանական հին մոլտաւական առած մը կ'ըսէ. Տուգանքը միշտ Հայուն վրայ կ'իյնայ, այսինքն ամէն պարագայից մէջ Հայը միայն յանդիմանութիւնն ու պատիժը պիտի կրէ:»

Որչափ ալ անհաճոյ էր մեզ՝ իբր հայածէս Ռումանացի՝ Հայոց յիշեցնել այն ամէն այլանդակ ու անպատեհ կարծիքները, զորոնք Ռումանացիք իրենց վրայ ունէին երբեմն. եւ Ռումանացւոց ալ այն անմտութիւնները զորս գարու մը տգիտութիւնը կրցաւ հնարել, չկրցանք ազգային ու կրօնական նկատմանց պատճառաւ այս ամենայն յիշատակելէ ետ կենալ՝ հետեւելով միշտ Պր. Հաշտէուի այն իմաստուն խորհրդոյն զոր կու տայ պատմութեան ըննադատներուն:

* Առաջադրուի բառը՝ Յունաց քով այս ձևերն առած:

1 Ասոնք Կոմորայի օրէնսդրութեան եւ այլ կրօնական բազմաթիւ մատեններէ քաղուած վկայութիւններ են:

* Ինչպէս եւ Կեսարիայի Մարկոս մետրապոլիտան իւր շունը Արմեն կը կոչէր, որուն կը վկայէ իրեն ու Գաղկայ մէջ պատահած դէպքը: